

Հիմա մենք, արդէն բաւական ծերացած սերունդներս, խօսքերնիս կ'ուղղենք Վարուժանի եւ միսներուն.

*«Ապրիք, որդիք, բայց ոչ մեզ ապրիք»:*

Երանի՛ թէ դուք այնքա՛ն չզգաք մեր ցեղի անիծեալ ճակատագիրը ձեր սրտի եւ մէջքի վրայ, այնպէ՛ս ահագնօրէն ծանր, որպէս մենք զգացինք: Երանի՛ դուք ժամանակ ունենաք *զուարճանալու*, ինդալու, արբենալու: Ով *քե՛ք* ընել, զուարճանալ չգիտէ, ան կէ՛ս-մարդ է:

Յեղի տառապանքին կողքին այն Վէռհառնեան կսկիծով կը զգայ իր հոգու վրայ ծանրացած ուրիշ բեռ մը եւս: Այդ բեռը ան առեր է հոնկէ – Վենետիկի կայտոուն ալիքներու մէջէն, Պրիւքսէլի մոայլ երկինքի տակէն, Փարիզեան ժխորէն: Աշխատանքի երգն է ան: Անոր *Բանտորուհին*, անոր *Մտնող բանտորը*, վերջապէս անոր սքանչելիքներէն մին – *Մեքենաները*, կը յիշեցնեն վեհապանծ Վէռհառնի *Հրեշ քաղաքը*<sup>29</sup> եւ այլ ընկերվարական քերթուածները:

Այո՛, պարոններ, հնարաւոր է մարդկային տառապանքը եւս երգել նոյնպիսի գեղեցկութիւնով եւ հիւթեղ ոճով ու փառապանծ պատկերներով, ինչպէս *Արեւելեան քաղանիքը*, *Հարճը*, ինչպէս կոյսերու բոսորագեղ մարմարէ մերկութիւնները:

Ու ինծի կը թուի թէ Վարուժան քանի կը զարգանայ, այնքան կը հակի դէպի այդ կողմը, դէպի ձախ, դէպի ընկերվարութիւն:

Դանիէլ դեռ հազիւ եօթը տարուան գրական կեանք մը ունի, բայց գլխապառոյտ արագութիւնով մը սլացեր է վեր, անուն մը շիներ է իրեն համար, անձեռագործ արձան մը կանգներ:

Ուստի խօսքս կը վերջացնեմ, դիմելով սիրելի Դանիէլին հանգուցեալ բարեկամիս եւ ուսուցչիս՝ Ղ. Աղաւեանի խօսքերով.

*Ման՛ուկ, ման՛ուկ, ինձ չխաբես,  
Միշտ կաց այդպէս լուսաւոր*<sup>30</sup>: